ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 76 ՇԵՆՔԻ Հ. 13 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է .

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝ 69.2 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 29.09.2011 թ. N 2659251 վկայական/ սեփականության իրավունքով անհատույց օտարել /նվիրել/ Հրանտ Միշայի Քոչինյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք-Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.76 ՇԵՆՔԻ Հ. 13 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրանտ Միշայի Քոչինյանը դիմել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան՝ Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝ 69,2 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը մասնավորեցնելու խնդրանքով:

Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.09.2011թ. վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Շենգավիթ վարչական շրջանի «Գայանե» համատիրության կողմից 15.12.2014թ. և բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին 18.08.2011թ. տրված տեղեկանքների՝ Հրանտ Միշայի, Վահագն, Նելլի, Հրանտ Վահագնի, Արսեն և Ռուբեն Քոչինյանները 1999-2011 թթ. հաշվառված են եղել նշված հասցեում, իսկ բնակչության պետական ռեգիստրի հաշվառման մասին տրված 12.12.2014թ. տեղեկանքի՝ Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝69,2 քմ բնակարանում հաշվառված անձ չկա, սակայն առ այսօր այնտեղ փաստացի բնակվում է Հրանտ Միշայի Քոչինյանը: Վերջինս կատարում է բնակարանի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ վճարումները:

Շենգավիթի թաղապետի 15.11.1999թ. թիվ 221 որոշմամբ Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝69,2 քմ բնակարանը վարձակալության իրավունքով տրմադրվել է զոհված ազատամարտիկի այրի Աստղիկ Ղազարյանին: Վերջինս 2004 թվականի ՀՀ ՊՆ-ից ստացել է 7.575.000ՀՀ դրամ՝ բնակարան ձեռք բերելու նպատակով: Նշված բնակարանի նկատմամբ Աստղիկ Ղազարյանի վարձակալության իրավունքը չի ձևակերպվել և ներքին առուծախի պայմանագրով այդ բնակարանը Աստղիկ Ղազարյանը վաճառել է Հրանտ Միշայի Քոչինյանին:

Աստղիկ Ղազարյանի կողմից 2015 թվականի մարտի 15-ին տրված հայտարարության համաձայն՝ Հրանտ Միշայի Քոչինյանից և նրա ընտանիքի անդամներից որևէ պարտք ու պահանջ չունի և համաձայն է, որ նշված բնակարանը սեփականաշնորհվի Հրանտ Միշայի Քոչինյանի անվամբ: Հայտարարությունը վավերացված է նոտարի կողմից:

Վահագն, Նելլի, Հրանտ Վահագնի, Արսեն Քոչինյանները և Ռուբեն Քոչինյանի օրինական ներկայացուցիչներ Վահագն և Նելլի Քոչինյանները 12.10.2015թ համաձայնագրով իրենց համաձայնությունն են տվել, որպեսզի Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝69,2 քմ բնակարանը սեփականաշնորհվի Հրանտ Միշայի Քոչինյանի անվամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 04.08.2014թ. N ԿԽ-2/5004 և 29.01.2015թ. ՈԿԽ-2/422 գրություններում ներկայացված տվյալների համաձայն՝ Հրանտ Քոչինյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, Նելլի և Արսեն Քոչինյանների անվամբ ք. Երևան Նորագյուղ 135 բնակելի տան նկատմամբ գրանցված է բաժնային սեփականության իրավունք, Վահագն և Հրանտ Քոչինյանների անվամբ ք. Երևան Շիրակի փող. 2-րդ 2շ. 7 բնակելի տան նկատմամբ գրանցված է բաժնային սեփականության իրավունք:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի

տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման /Ծրագրի/4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի ք. Երևան, Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13՝69.2 հասցեում գտնվող գույքի անհատույց օտարման համար անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.76 ՇԵՆՔԻ Հ.13 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.76 ՇԵՆՔԻ Հ.13 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Արարատյան փողոցի հ. 76 շենքի հ. 13 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ